Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10357

# ՀԼԿՅԵՄ
# VII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
# Բ Ա Ն Ա Ձ Ե Վ Ը

ԿԵՆՏԿՈՄԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

3КСМ2(47.92)
Հ-24

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

ЗКСМ2(47.925)
Հ-24
730
24 SEP 2006
1 DEC 2009
329.150.4 "VII"

# ՀԼԿՅԵՄ VII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ

## ԿԵՆՏԿՈՄԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

[stamp]

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1931

01 JUN 2013
10357
ՊԵՏ. ԿՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. … БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ … ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Կ2691-63

Հրատ. № 1551
Գրավլիտ. № 6180 (բ). պատվեր № 713 տիրաժ 3000
Պետհրատի տպարան Յերևանում

ՀԼԿՅԵՄ 7-րդ համագումարը լսելով և քննելով միության 6-րդ համագումարից մինչև 7-րդ համագումարն անցած մեկ և կես տարվա ընթացքում Կենտկոմի աշխատանքների հաշվետու զեկուցումը, Կենտկոմի ընդհանուր քաղաքական գիծը գտնում է ճիշտ և պրակտիկ աշխատանքները բավարար, միաժամանակ մատնանշում է Կենտրոնական Կոմիտեյի և նրա օրգան «Ավանգարդ»-ի թույլ տված վերջին սխալները, ներկուսակցական պայքարի խնդիրներում՝ Սիրցով-Լոմինաձեյի դեմ տարվող պայքարում, վորը արտահայտվել է շփոթվածությամբ, և կոմյերիտական մասսաներին իր ժամանակին մոբիլիզացիայի չենթարկելու մեջ աջ «ձախ» բլոկի դեմ պայքարի հանելու գործում։

## ԿՈՓՎԵԼ, ԱՃԵԼ, ԱՄՐԱՑԵԼ Է ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Միության աշխատանքի անցած մեկ ու կես տարին բնութագրվում է միության հեղինակության աճմամբ ու տեսակարար կշռի բարձրացմամբ, յերկրի տնտեսական արտադրական և կուլտուր-քաղաքական կյանքում։ Այս շրջանում

Համ ԼԿՅԵՄ-ի անբաժան ջոկատ հանդիսացող Հայաստանի կոմյերիտմիության ամբողջ աշխատանքները, ընթացել են սոցիալիստական ծավալուն հարձակողականի նշանաբանի տակ և 16-րդ կուս. համագումարի ու Հայկոմկուսի Է-րդ համագումարի տված դիրեկտիվների վճռական իրագործման ուղիով:

*Սոցիալիստական շինարարության ներկա «մեծ բեկման» շրջանը բնորոշվում է սոցիալիստական ինդուստրիայի տեմպերի վերասլաց թափով, ավխող շինարարության ուժեղացումով և գլխավորն է՝ մանր, անհատական գյուղական տնտեսությունների խոշոր կոլեկտիվ տնտեսությունների ռելսերի վրա փոխադրումով ու այդ հիման վրա գյուղատնտեսության արտադրանքի աճումով: Գյուղացիության հիմնական մասսաները արդեն վճռական շրջադարձ են կատարել դեպի յերկրագործության սոցիալիստական ձևերը:*

*Հեղափոխության ներկա էտապում, ամբողջ ֆրոնտով ծավալուն հարձակողականի պայմաններում՝ կապիտալիստական տարրերի դեմ մեր յերկրում,* աննախընթաց կերպով սրվել է դասակարգային պայքարը: Կուսակցությունը վճռական շրջադարձ է կատարել իր քաղաքականության մեջ՝ կապիտալիստական տարրերի սահմանափակման քաղաքականությունից անցնելով կապիտալիզմի արմատների ամբողջական վոչնչացմանը, կուլակին վորպես դասակարգի վերացմանը, համատարած կոլեկտիվացման հիման վրա:



## ՊԱՅՔԱՐԸ ՍՐԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ ՀԱՄԱՐ

*Սոցիալիստական շինարարության դժվարությունների, մեր վերելքի, աճման ու առաջխաղացման դժվարությունների ու դասակարգային թշնամու կատաղի դիմադրության պայմաններում, ինչպես կուսակցության մեջ, նույնպես և կոմսոմոլում աշխուժացել են* կուսակցության գլխավոր գծից կատարվող աջ յեվ «ձախ» թեքումները, վորոնք արտահայտում են մանր բուրժուական տարրերի ճնշումը կուսակցության յեվ կոմսոմոլի թույլ ողակների վրա: Այս պայմաններում կուսակցության յեվ կոմսոմոլի առաջ վճռական խնդիր է դրվում անհաշտ պայքար ծավալել յերկու ֆրոնտում՝ աջ թեքման դեմ վորպես ներկա էտապի գլխավոր վտանգի, «ձախ» խոտորումների դեմ, վորոնք ըստ էության հանդիսանում են հակահեղափոխական տրոցկիզմի ռեցիդիվը յեվ թեքումների նկատմամբ հաշտվողական վերաբերմունք ունենալու դեմ:

*Անցած շրջանը Հայաստանի կոմսոմոլի հա-*

մար ևս հանդիսացել է մեծ բեկման շրջան՝ միության աշխատանքների բոլոր բնագավառներում։ Հաշվետու շրջանում կոմսոմոլը վճռական շրջադարձ է կատարել դեպի վերակառուցման շրջանի խնդիրներն ու պահանջները։ Հայաստանի կոմսոմոլը 5-ամյակը 4 տարում կատարելու համար, եռանդուն պայքար է մղել հանդիսանալով կուսակցության լավագույն ու ակտիվ օգնականներից մեկը։

## ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԸ

Կոմսոմոլը գործարանում և գյուղում բարձր ե պահել սոցիալիստական մրցման յեվ հարվածայնության դրոշը, պայքարել ե արդֆինպլանների կատարման յեվ գերակատարման համար։ Սակայն հակառակ այս անժխտելի նվաճումների, համագումարը գտնում է, որ ամբողջ ճակատով կատարվող սոցիալիստական հարձակողականի բուռն տեմպերից այնուամենայնիվ կոմյերիտմիությունը յետ ե մնում։ Մեր կազմակերպությունները դեռևս յետ են մնում սոցիալիստական շինարարության առաջադրանքներից. չի կատարվել պղնձի, բամբակի յեվ այլն պլանները։

Համագումարը կոմյերիտական կազմակերպություններին պարտավորեցնում է ավելի ու-



ժեղացնել պայքարը 5-ամյակը 4 տարում կատարելու համար, ավելի լայն ծավալելով սոցիալիստական մրցության, հարվածայնության, հանդիպական արդֆինպլանների, փոխանցիկ բրիգադաների, հասարակական բուքսիրների աշխատանքները՝ գյուղում, և քաղաքում։

Արդֆինպլանների կատարման և գերակատարման զուգընթաց կոմսոմոլը պետք է համառ պայքար մղի արտադրության որակական ցուցանիշների բարձրացման, ինքնարժեքի իջեցման բրակի և գործալքումների դեմ, դրա զուգընթաց լայնորեն ծավալելով ռացիոնալիզատորական շարժումը, գյուտարարությունը և յերիտասարդության տեխնիկական գիտելիքների մակարդակի բարձրացման աշխատանքները։

## ԻՆՉՈՎ Ե ԳՆԱՀԱՏՎՈՒՄ ԲՋԻՋԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Միաժամանակ համագումարն արտադրական, ֆինանսական պլանների կատարման համար պատասխանատու յե համարում յուրաքանչյուր գործարանի, գյուղի, կոլխոզի յեվ դպրոցի կոմսոմոլի բջիջին յեվ պլանների կատարման աստիճանով ե գնահատում յուրաքանչյուր բջիջի աշխատանքը։

Համագումարը գտնում է, որ պղնձա-արդյունաբերության, շինանյութերի և տրանսպոր-

ափ արդֆինպլաններում առաջացած ճեղքվածքի հիմնական պատճառների մեջ հանդիսանում է կոմյերիտմիության անհրաժեշտ նախաձեռնության բացակայությունը, սոցմրցման և հարվածայնության անբավարար ծավալումը, արդյունաբերության հիշյալ ճյուղերում և այլն, վոր կոմյերիտական կազմակերպությունները չեն կարողանում կազմակերպված կերպով օժանդակել մասնագետների առաջավոր մասին, անհրաժեշտ պայքար չեն ծավալում բանվորական ուժի հոսունության դեմ։

## ԿՈՄՍՈՄՈԼԸ ՊՂՆՁԻ ՄԵՋ

Պղնձա-արդյունաբերության պլանների թերակատարումն ինկատի առնելով, համագումարը վորոշում է վերցնել Հայաստանի պղնձարդյունաբերության շեֆությունը և առաջարկում է Կենտկոմին և բոլոր ԼԿՅԵՄ կոմիտեներին, գլխովին մոբիլիզացիայի յենթարկել վողջ կազմակերպությունը և առաջին հերթին պղնձի ֆրոնտում աշխատող կոմյերիտականներին, արտադրական և արտամիութենական յերիտասարդության ակտիվությունը մեր ծանր ինդուստրիայի համար հսկայական նշանակություն ունեցող պղնձի պլանների լրիվ կատարման և գերակատարման համար։



Համագումարը նշում է, վոր հաշվետու շրջանում բարելավվել է բանվոր դասակարգի և բանվոր յերիտասարդության նյութական դրությունը, բարձրացել է բանվոր յերիտասարդության և անչափահասների ռեալ աշխատավարձը, բարելավվել է նրանց բնակարանային պայմանները, ուժեղացել է աշխ. պաշտպանությունը, վորի հետևանքով նվազել են հիվանդությունները, հիմնականում վերացել է գործազրկությունը, յերիտասարդության մեծ մասն անցել է 7-ժամյա բանվորական օրվա, վորի հիման վրա բարձրացել է յերիտասարդության կուլտուր-տնտեսական մակարդակը։ Այս բոլորը վկայում է Լոմինաձեյական բարբաջանքների սնանկությունը «աշխատավարձի յուրջ ճեղքվածքի» մասին։

## ՊԱՅՔԱՐԵԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ

Համագումարը Կենտկոմին պարտավորեցնում է հետագայում ավելի արագ տեմպերով շարունակել բանվոր յերիտասարդության և անչափահասների նյութական դրության սիստեմատիկ բարելավման աշխատանքը, ավելի բարձրացնել նրանց ռեալ աշխատավարձը, ինչպես մատակարարման բարելավման գծով, նույնպես և բանվոր յերիտասարդության և անչափահաս-

*ների կուլտուրական, բնակարանային և կենցաղային կարիքների սպասարկման գծով,* կազմակերպելով կոմյերիտմիության ակտիվ մասնակցությունը բանվորական սննդի մատակարարման հետագա բարելավմանը, հասարակական սննդի էժանացմանը, նրա վորակի բարձրացմանը. ակտիվ մասնակցելով մեծ քաղաքային տնտեսությունների կազմակերպման յեվ ընդարձակման աշխատանքներին։

*Այս կարևոր խնդիրների կենսագործումը, կոմյերիտական կազմակերպություններից պահանջում է՝* վճռական շրջադարձ կատարել դեպի սպառ-կոոպերացիայի աշխատանքները, ուժեղացնելով պայքար վարչատնտեսական ծախսերի կրճատման, բյուրոկրատիզմի, թափթփվածության դեմ, ամրացնելով հասարակական կոնտրոլը կոոպերացիայի աշխատանքների վրա յեվ լավագույն կոմյերիտականներին ու հարվածայիններին առաջ քաշելով կոոպերացիայի ստորին յեվ ղեկավար-աշխատանքներում:

*Համագումարը պարտավորեցնում է Կենտկոմին և բոլոր կազմակերպություններին վորպես շեֆ ավելի լուրջ ուշադրություն դարձնել* ելեկտրոշինարարությանը, *մոբիլիզացիայի յենթարկել վողջ կոմյերիտական կազմակերպությունը և աշխատավոր յերիտասարդությունը հիդրոկայանների*



*շինարարության արագացման, շինանյութերի ռացիոնալ ոգտագործման, արդյունաբերությունն ենէրգիայով ապահովելու, ենէրգիայի ռացիոնալ ծախսման և ելեկտրոենէրգիան վատնողների դեմ պայքարելու համար։*

## ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ԱՌԱՋԱՑՆԵԼ ՎՃՌԱԿԱՆ ԲԵԿՈՒՄ

*Ժողովրդական տնտեսության զարգացման բուռն տեմպերը բացառիկ պահանջներ են առաջադրում տրանսպորտին։ Դրանից յելնելով համագումարը Կենտկոմին առաջարկում է առանձնապես տրանսպորտի ֆրոնտում աշխատող կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքում կարճ ժամանակում առաջացնել* վճռական բեկում այն իմաստով, վոր ավելի բարձրանա սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունը, բարձրանա աշխատանքի վորակական ցուցանիշները, ապահովվի կոմսոմոլի ակտիվի մասնակցությունը յերկաթուղային աշխատանքների վերակառուցման յեվ նոր շինարարության ասպարիզում։

*Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել անայնագործ յերիտասարդության մեջ տարվող աշխատանքները,* ավելի լուրջ ուշադրություն դարձնելով *նրանց իրավատնտեսական շահերի*

պաշտպանությանը, նրանց տնտեսական դրության բարելավմանը, և կուլտուրական մակարդակի բարձրացմանը։

### ԵՐԵՍՈՎ ԴԵՊԻ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Կոմյերիտական կազմակերպություններն արմատական և վճռական շրջադարձ պետք է կատարեն իրենց աշխատանքներում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ, նկատի ունենալով որ «ԽՍՀՄ-ի համատարած կոլեկտիվացումը հիմնականում պետք է ավարտվի 5-ամյակի վերջում» (Ստալին) ՀՍԽՀ-ի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումն այս տարի պետք է կրկնապատկվի՝ չքավոր և միջակային տնտեսությունների 25 տոկոսից վոչ պակաս ներգրավելով կոլտնտեսությունների մեջ, իսկ բամբակացան շրջաններում 50 տոկոսից վոչ պակաս։ Գյուղում դասակարգային պայքարի սրված պայմաններում տեղի ունեցող խորհ. տնտեսությունների և կոլտնտեսությունների զարգացման ծրագիրը գյուղական-կազմակերպություններից պահանջում է ամրապնդել միության գաղափարական յեվ քաղաքական հզորությունը յեվ բարձրացնել իր շարքերի դասակարգային մարտունակությունը անհաշտ պայքար ծավալելով յերկու ճակատում։



Մանր, անհատական տնտեսությունները սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու աշխատանքը, համատարած կոլեկտիվացման նախապատրաստումը յեվ այդ հիման վրա կուլակության, վորպես դասակարգ վերացումը, հիմնական յեվ առաջընթաց խնդիր է հանդիսանում ՀԼԿՅԵՄ գյուղական կազմակերպությունների համար։

Կոլեկտիվացման բնագավառում ձեռք բերված նվաճումների ամրապնդումը և հետագա զարգացումը հնարավոր է միայն կուսակցության 16-րդ համագումարի բոլշևիկյան վորոշումների անշեղ կիրառման դեպքում։ Անհաշտ պայքարելով աջ պրակտիկայի դեմ անհրաժեշտ է հիմնովին ըմբռնել կոլտնտեսային շարժման ասպարեզում հակամիջակային սխալների բնույթը, պայքարելով նրա ռեցիդիվների դեմ, և Լենինյան սկզբունքների հիման վրա կազմակերպել նոր, հուժկու հոսանք դեպի կոլտնտեսությունները։

Ներկա շրջանում կոլեկտիվ տնտեսությունների հիմնական ձև համարելով արտելներն անհրաժեշտ է կազմակերպել նաև դրանց հետ միասին կոլեկտիվ տնտեսությունների ավելի հասարակ ձևերը (հողագործական և այլն), վորպես անցողիկ մի ձև դեպի արտելները։ ԼԿՅԵՄ կազ-

մակերպությունները համապատասխան դաս վերցնելով գարնան կատարված «ձախ» սխալներից, պայքարելով նրա կրկնությունների դեմ, պետք է գործնականում կիրառեն կոմյերիտականներին 100 տոկոսով կոլտնտեսություններում յեվ գյուղատնտեսական ընկերությունների հատուկ ձեվերում ընդգրկելու խնդիրը։

Համագումարը բոլոր գյուղական կազմակերպություններին պարտավորեցնում է անհապաղ գյուղում, կոլխոզում և սովխոզում ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը։

Բացառիկ նշանակություն տալով տեխնիկական կուլտուրաների, անասնապահության և մանավանդ բամբակի զարգացման գործին, համագումարը միության կենտկոմին և կոմիտեներին առաջարկում է ձեռք առնել ամենավճռական միջոցներ կատարելու յեվ գերակատարելու համար բամբակի յեվ կուլտուրական բույսերի ցանքսերի պլանները յեվ զարկ տալ անասնապահության զարգացմանը։

Համագումարը բամբակացան շրջանների ԼԿՑԵՄ կազմակերպություններին նախազգուշացնում է, վոր բամբակի ցանքսերի յեվ մթերման պլանի թերակատարումը գնահատելու յե վորպես բամբակացան տվյալ շրջանի ԼԿՑԵՄ կազմակերպության ղեկավարության անընդունակություն՝ կուսակցության գծի պրակտիկայում կենսագործելու ասպարեզում։



## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊԱՐԱՏԻ ՍԻՍՏԵՄԱՏԻԿ ԼԱՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Խորհրդային ապարատի սիստեմատիկ լավացման և ամրացման համար համագումարը ԼԿՑԵՄ կազմակերպություններին առաջարկում է՝

1. Ակտիվ մասնակցել խորհուրդների վերընտրական աշխատանքներին, լավագույն և ստուգված կոմյերիտականներին և աշխատավոր յերիտասարդության առաջ քաշելով խորհուրդներում.

2. «Թ. Հ»-ի աշխատանքի աշխուժացման հիման վրա ուժեղացնել բյուրոկրատիզմի յեվ քաշքշուկի դեմ մղվող պայքարը։

3. Ակտիվ մասնակցել խորհրդային ապարատը անհարազատ տարրերից զտելու, առաջ քաշելով հարվածային բանվորներ և կոլխոզնիկներ, ուժացնելով ապարատի բանվորականացման աշխատանքները։

4. Հասարակական հսկողություն կազմակերպել խորհրդային ապարատի աշխատանքի վրա, ուժեղացնել բանվորական կազմակերպությունների շեֆությունը, կազմակերպել ռացիոնալիզատորական հարվածային բրիգադներ և այլ

հիման վրա եժանացնել խորհրդային ապարատի վարչատնտեսական ծախսերը։

Ամբողջ ֆրոնտով տարվող բոլշևիկյան ծավալուն հարձակողականի պայմաններում, հսկայական կարևորություն է ստանում մասսայական կազմակերպությունների ակտիվացումը, աշխատավորական լայն մասսաների մոբիլիզացիան։ Դրանից բղխում է բանվոր դասակարգի ամենամասսայական կազմակերպության պրոֆ. միության աշխատանքների վճռական յեվ արմատական վերակառուցումն ու վերադասավորումը, աշխատավորական մասսաների արտադրական վերելքը գլխավորելու համար։ Ուստի համագումարն առաջարկում է ավելի լուրջ ուշադրություն դարձնել պրոֆմիութենական աշխատանքների վրա, ջախջախել կոմսոմոլի վորոշ օղակներում, պրոֆմիութենական աշխատանքների նկատմամբ ցուցաբերվող աջ օպորտյունիստական վերաբերմունքը, և պրոֆմիութենական աշխատանքներում համարձակ կերպով առաջ քաշել լավագույն կոմյերիտականներ, յերիտասարդ հարվածայիններ։

## ԱՎԵԼԻ ՄՈՏ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԻՆ

Նշելով ժողովրդական տնտեսության համար կադրեր պատրաստելու բնագավառում կենտկոմի կատարած բավարար աշխատանքը



համագումարն առաջարկում է ել ավելի ուժեղ պայքար մղել ֆաբգործուսների դերի թերագնահատման դեմ, հետագայում լայնացնել ֆաբգործուսների ցանցը, բարձրացնելով գոյություն ունեցող ֆաբգործուսների աշխատանքի վորակը, միաժամանակ ընդարձակելով յեվ ամրացնելով կոլյերիտ-դպրոցների ցանցը։

Կադրերի խնդիրը այժմ դրվում է ավելի սուր քան յերբևիցե, դա հանդիսանում է 5-ամյակի կատարման հիմնական նախադրյալներից մեկը։

Կոմսոմոլը պետք է ընդհուպ մոտենա կադրերի հարցի լուծմանը, ուժեղացնելով և բարելավելով միության աշխատանքը ֆաբգործուսների, շինուսների, տեխնիկումների, և բուհերի գծով։ Հավանություն տալով Կենտկոմի կողմից այդ բնագավառում ձեռք առնված միջոցներին, կուսակցության դիրեկտիվների հիման վրա պետք է ել ավելի ուժեղացնել կադրերի պատրաստման թափը, և նրանց վորակը, կատարելով ՀԱՄ. Կ (բ) Կ Կենտկոմի Նոյեմբերյան պլենումի վորոշումները կադրերի պատրաստման մասին։

Կոմսոմոլը կուլտուրական ֆրոնտում ձեռք է բերել նշանակալի նվաճումներ։ Նա վերցրել է պարտադիր ուսման շեֆությունը։ Չնայած պարտադիր ուսման [illegible]ման և անգրագիտու-

42691-63
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР

թյան վերացման ասպարեզում կոմյերիտմիության տարած աշխատանքին, համագումարը խնդիր է դնում կազմակերպությունների առաջ վճռական բեկում կատարել պարտադիր ուսման լիովին իրագործման յեվ անգրագիտության գլխովին վերացման ասպարեզում, հետեվողական պայքար մղելով պոլիտեխնիզացիայի ամրացման յեվ ծավալման համար:

ԽՍՀՄ-ի դեմ ռազմական ինտերվենցիայի վտանգի աճումը, հակահեղափոխական կազմակերպությունների հայտաբերումը վերջին շրջանում, մեր առաջ խնդիր է դնում ռազմականացնել վողջ կոմսոմոլն ու աշխատավոր յերիտասարդությունը: Դրանից յելնելով համագումարը Կենտկոմին հանձնարարում է ձեռք առնել ամենավճռական միջոցներ կոմսոմոլի շարքերի ռազմականացման համար, ուժեղացնել կապը Կարմիր բանակի և ֆլոտի հետ, պարտադիր դարձնել ռազմական ուսուցումը: Անհրաժեշտ է ամենամոտ ապագայում իրագործել, «վոչ մի կոմյերիտական Պաշ-ավյաքիմից դուրս չպետք է մնա» լոզունգը, միաժամանակ ուժեղացնելով ֆիզկուլտ աշխատանքները:

Համագումարն առաջարկում է Կենտրոնական Կոմիտեյին բարձրացնելու ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքների վորակը, ուժեղացնելու նրանց մեջ տարվող քաղաքական և կուլտուրական աշխատանքները, նրանց ակտիվ մասնակից դարձնելով սոցիալիստական շինարարության աշխատանքներին: Ազգային փոքրամասնությունների մեջ աշխատանքի վորակի բարձրացումը մեր առաջ խնդիր է դնում ամենաարագ կերպով ազգային փոքրամասնություններից պատրաստել կոմերիտական ղեկավար կադրեր:



Համագումարը ընդգծելով պիոներական կազմակերպության մեջ կուսակցության և կոմսոմոլի ղեկավարության անբավարար դրությունը, առաջարկում է ուժեղացնել ղեկավարությունը այդ բնագավառում, լուրջ ուշադրություն դարձնելով պիոներական կազմակերպությունների աճման յեվ նրանց ինտերնացիոնալ դաստիարակության խնդիրների վրա, նրանց գլխովին լծելով սոցիալիստական շինարարության գործնական աշխատանքներին:

## ԵՎ ԱՎԵԼԻ ԽՏԱՑՆԵԼ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐԸ

Նշելով միության աճման գործում ձեռք բերված նվաճումները, համագումարը գտնում է, վոր կոմիտեների կողմից միության աճման համար սիստեմատիկ աշխատանք չի տարվում:

Անհրաժեշտ է մոտիկ ապագայում իրագործել՝ բանվոր և բատրակ երիտասարդության 100 տոկոսով կոմյերիտմիության մեջ ընդգրկելու այդ առաջավոր լոզունգը, ուժեղացնելով նաև առաջավոր կոլտնտեսականների և չքավոր երիտասարդության լայն մասսաներին միության մեջ ընդգրկելը: Համագումարն առաջարկում է միջակ երիտասարդության կոմսոմոլի մեջ ընդգրկման ասպարեզում ունենալ անհատական մոտեցում, ընդունել միջակ երիտասարդության այն մասին, որն իր տնտեսությամբ սակավահող է և որ կուսակցության ակտիվ կերպով օգնում է կոլխոզ շինարարության ասպարեզում, չքավորության և բատրակության մեջ տարվող աշխատանքներում, որը պայքարում է կուլակության դեմ: Պետք է դաստիարակել երիտասարդ կոլտնտեսականներին 100 տոկոսով կոմսոմոլի մեջ ընդգրկելու տրամադրությունները, հատկապես վոչ համատարած կոլեկտիվացման շրջաններում միաժամանակ անողոք պայքար մղելով երիտասարդ կուլակին կոմսոմոլի մեջ վերադաստիարակելու աջ օպորտյունիստական տրամադրությունների դեմ:

Համագումարն անհրաժեշտ է գտնում ուժեղացնել աշխատանքը բատրակ չքավորական մասսաների մեջ, ակտիվ կերպով օգնել բատրակ-չքքավորական խմբակներին, հրավիրել բատրակ-չքքավորական կոնֆերանսներ, ժողովներ, խորհրդդակցություններ և այլն կուսակցության մարտական խնդիրների շուրջը:



Դասակարգային պայքարի աննախընթաց սրման ներկա պայմաններում պրոլետարական դիկտատուրայի դիրքերն ամրանում են և մենք նորանոր նվաճումներ ենք ձեռք բերում՝ ծավալուն պայքար մղելով հակահեղափոխական բոլոր իդեոլոգիաների դեմ, անխնա պայքարելով երկու ֆրոնտով կուսակցության և կոմսոմոլի ներսում աշխուժացող թեքումների դեմ, աջ թեքման դեմ վորպես գլխավոր վտանգի և «ձախ» օպորտյունիզմի դեմ, վորովհետև անհնարին է իսկական պայքար ծավալել դասակարգային թշնամիների դեմ, թիկունքում ունենալով նրանց արտահայտությունը կուսակցության մեջ, թիկունքում թողնելով այնպիսի մարդկանց, վորոնք չեն հավատում մեր գործին, ամեն կերպ աշխատում են դանդաղեցնել մեր շարժումը դեպի առաջ» (ՍՏԱԼԻՆ):

## ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ԳՐՈՀԸ ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ

Դասակարգային պայքարի ընդհանուր սրման ֆոնի վրա ուժեղանում է և պայքարը ե-

րիտասարդության գրավման համար։ Աշխուժանում են հակահեղափոխական իդեոլոգիաները և փորձում են ազդել կոմսոմոլի յետամնաց օղակների և աշխատավոր յերիտասարդության վրա։ Դրանից յելնելով համագումարն առաջարկում է բոլոր կազմակերպություններին ել ավելի ուժեղացնել իդեոլոգիական պայքարը կազմակերպության բոլոր օղակներում, ամենաուժեղ և ջախջախիչ հարված տալով հայկական խոշոր բուրժուազիայի կուսակցության, ֆաշիստական դաշնակցության և դաշնոմոլի դեմ։

Նացիոնալիզմի դեմ ուժեղացրած պայքարը պահանջում է ել ավելի ամրացնել պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերը, ուժեղացնել ինտերնացիոնալ կապը մեր յեղբայրական մյուս կազմակերպությունների հետ։

Իդեոլոգիական ֆրոնտում մեր կարևոր թշնամիներից մեկը յեղել է և մնում է կրոնը, վորը փորձում է արգելակել սոցիալիստական ծավալուն արշավը։ Համագումարը նշում է հակակրոնական ճակատում կատարվող աշխատանքի անբավարար լինելը և պահանջում է ամենամոտ ժամանակամիջոցում վճռական բեկում կատարել հակակրոնական աշխատանքներում, ամենալուրջ մոտեցում ցույց տալ կրոնի դեմ մղվող պայքարին, այն իմաստով, վոր պայքարը կրոնի դեմ



ներկա կամպանիան բնույթից վերածվի մշտական, սիստեմատիկ յեվ խորացրած պայքարի։

Համագումարը գտնում է, վոր հաշվետու ժամանակաշրջանում Կենտրոնական Կոմիտեն նըշելի բեկում է կատարել միության պրոլետարական ակտիվի առաջ քաշման և դաստիարակման գործում։ Սակայն վերակառուցման շրջանում ղեկավարության և ակտիվի առաջ ծառացած չափազանց պատասխանատու խնդիրները պահանջում են նրա տեսական մակարդակի հետագա բարձրացումը, կուսակցության գլխավոր գծի լիովին ըմբռնումը։

## ՍՊԱՌԱԶԻՆՎԵԼ ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆԻԶՄՈՎ

Հեղափոխական տեսության սիստեմատիկ, համառ ուսումնասիրությունը կոմյերիտմիության բովանդակ աշխատանքի կարևորագույն մոմենտներից մեկը պետք է հանդիսանա։ Տնտեսության ուսումնասիրությունը պետք է յուրաքանչյուր կոմերիտականի աշխատանքի մասը դառնա։ Առանց հեղափոխական տեսության, դասակարգային պայքարն առանց տեսականորեն ըմբռնելու կոմերիտմիությունը չի կարող բոլշևիկներ, միջազգային հեղափոխականների դաստիարակել (Կոսարև)։ Դրանից յելնելով համագումարը

խնդիր է դնում ավելի լուրջ ուշադրություն դարձնել քաղ. ուսուցման վրա, վճռականապես հարվածելով քաղուսուցման ոպորտյունիստական թերագնահատման ամեն մի փորձ: Անհրաժեշտ է ակտիվին զինել Մարքս-Լենինիզմի զենքով, վորպեսզի նա կարողանա ըմբռնելով յերկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական պրոցեսները, կարողանա արագ կողմնորոշել միության լայն մասսաներին, կարողանա միության աշխատանքները լիովին հարմարեցնել յեվ վերակառուցել ամբողջ ճակատով կատարվող սոցիալիստական արշավի խնդիրներին, ավելի բարձր աստիճանի վրա դնել միության տնտեսական յեվ կուլտուրական աշխատանքը։

*Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել գրականության և գեղարվեստի վրա, իդեոլոգիական ֆրոնտի այդ ամենահատու զենքերն ավելի հաջող կերպով գործածելու համար, պայքարի այդ պատասխանատու բնագավառն ուժեղացնելով պրոլետարական կադրերով, բարձրացնելով մասսայական գրականության պարբերական հրատարակությունների* քանակն ու վորակը մեծացնելով կազմակերպության կենտրոնական օրգան «Ավանգարդի» ծավալը յեվ կանոնավորել «Յերիտասարդ բոլշեվիկի» հրատարակությունը։



*Համագումարը գտնում է, վոր «մեծ բեկման» ներկա էտապում միության առաջ դրված խնդիրների հաջող լուծումը հնարավոր է միայն կուսակցական ղեկավարության եվ ավելի ամրացմամբ կոմսոմոլում, կուս. կորիզի բարձրացումով և պրոլետարական ղեկավարության ամրացման միջոցով։*

*Տնտեսական և կուլտուրական շինարարության, ինչպես նաև իդեոլոգիական պայքարի ֆրոնտում կոմյերիտմիությունն անժխտելի նվաճումներ է ձեռք բերել՝* կուսակցության ղեկավարությամբ պայքարելով յերկու ֆրոնտում աջ կուլակային թեքման դեմ, վորն էր յեվ ներկա էտապում մնում է գլխավոր վտանգը, «ձախ» խոտորումների, ըստ էության տրոցկիստական ռեցիդիվների ու հաշտվողականության դեմ:

*Վերջին շրջանում դասակարգային պայքարի սրման զուգընթաց կուսակցության և կոմսոմոլի մեջ աշխուժացել են նաև ազգային թեքումները։*

*Մեծապետական շովինիստական թեքումը հանդիսանում է գլխավոր վտանգը կուսակցության և կոմսոմոլի մեջ ներկայումս, վորի դեմ պետք է կենտրոնացնել գլխավոր կրակը, ինչպես և պիտի ուժեղացնել պայքարը տեղական նացիոնալ-ուկլոնիզմի դեմ, վորը մեր պայմաններում էական վտանգ է ներկայացնում և հան*

դիտանում է հատուկ խնդիր կուս. և կոմերիտ. կազմակերպությունների համար։

Նացիոնալ ուկլոնիզմի դեմ ծավալելով պայքարը՝ կոմերիտական կազմակերպությունները պետք է ուժեղացնեն իրենց աշխատանքը Անդրֆեդերացիայի տնտեսական և քաղաքական հիմքերն էլ ավելի ամրացնելու համար։

Համագումարն ընդգծում է Սիրցով-Լոմինաձեյի աջ-«ձախ» անսկզբունք բլոկի դեմ, Կենտրոնական Կոմիտեյի ցուցաբերած շփոթվածությունը, որի պատճառով Կոմերիտմիությունը ժամանակին մոբիլիզացիայի չենթարկվեց աջ-«ձախ» բլոկի դեմ պայքարի համար։ Նշելով այդ, անհրաժեշտ է հետագայում էլ ավելի բարձրացնել Կոմերիտմիության զգոնությունն ու աչալրջությունը հանդեպ թեքումները։ «Քննադատաբար իմաստավորելով տեղի ունեցող բոլոր երեվույթները, սպառազինվելով Մարքս-Լենինյան զենքերով, կոմերիտականները պետք է պայքարեն կուսակցության գծի համար ընդդեմ օպորտյունիստական տատանումների ու թեքումների» (ԿՈՍԱՐԵՎ)։

## ԱՎԵԼԻ ՎՃՌԱԿԱՆ ԾԱՎԱԼԵԼ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Համագումարը գտնում է, որ Հայաստանի



կոմերիտմիության առաջ դրված քաղաքական-տնտեսական և կուլտուրական խնդիրների լուծման պայմաններից մեկը հանդիսանում է բոլշևիկյան ինքնաքննադատության ավելի համարձակ ու վճռական ծավալումը։ Անողոք ինքնաքննադատության կիրառումով միայն հնարավոր է մասսաների իրական մոբիլիզացիան, մասսայական աշխատանքի բոլոր ձևերի աշխուժացումը, որը մեր առաջընթաց գլխավոր նախապայմաններից է հանդիսանում։

Բոլշևիկյան ինքնաքննադատությամբ և ներմիութենական դեմոկրատիայի լայն ծավալումով, անհաշտ պայքարով երկու ճակատում, վողջ միության և աշխատավոր երիտասարդության արտադրական ակտիվության ու հեղափոխական էնտուզիազմի զորահավաքով և կուսակցության անմիջական ղեկավարությամբ, Հայաստանի կոմսոմոլն ավելի սերտորեն յեվ միաձույլ համախմբված Կենտրոնական Կոմիտեյի շուրջը՝ բոլշևիկորեն կկատարի 16-րդ համագումարի պատմական վորոշումները, հնգամյակի 3-րդ, վճռական տարում ավելի բարձր կպահի սոցմրցման յեվ հարվածայնության դրոշը։

Լենինյան կուսակցության ղեկավարությամբ կոմսոմոլը ձեռք է բերել հսկայական նվաճում-

ներ սոցիալիստական շինարարության բոլոր ճա-կատամասերում:

Լենինյան կուսակցության ղեկավարությամբ կոմսոմոլը կպայքարի սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար:

## ՀԼԿԵՄ 7-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՊԻՈՆԵՐ ԿԵՆՏՐԲՅՈՒՐՈ-ՅԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

ՀԼԿԵՄ 6-րդ համագումարից մինչև 7-րդ համագումարը պիոներ. կազմակերպությունը աճել է վոչ միայն քանակապես այլ և վորակապես բարձրացել է կազմակերպության տեսակարար կշիռը, կոմունիստական դաստիարակության բոլոր սիստեմներում: Այդ շրջանում պիոներ կազմակերպությունը իր շուրջն է խմբել մեծաքանակ պրոլետարական աշխատավորական անկազմակերպ պատանի մասսաների լայն զանգվածներին՝ 6-րդ համագումարից մինչև 7-րդ համագումարը կազմակերպությունը 29 հազարից դարձել է 51,711:

Մասնավորապես 6-րդ համագումարից հետո պիոներ կազմակերպությունը ավելի քան ակտիվ, գործնական մասնակցություն է ունեցել կուսակցության կողմից առաջադրած մարտական լոզունգների իրագործմանը (խորհրդների վերընտրությունն, կուլտբերք՝ արշավներ, անգրագիտության վերացում, հացամթերում և այլն): Պիոներական հավաքներից հետո կազմակերպությունը կատարել է հիմնական շրջադարձ սոց. շինարարության բնագավառում, վորն արտահայտ-



վել է սոց. շինարարության գործնական աշխատանքներում ունեցած մասնակցության ուժեղացմամբ, վոր են՝ պայքար արդֆինպլանների, հարվածայնության, սոց. մրցման, պարտադիր ուսուցման, աշնանացանի, գարնանացանի աշխատանքներ:

Այս աշխատանքները շաղկապելով երեխաների ինքնագործունեության զարգացման, նրանց ինիցիատիվայի հայտնաբերման հետ, հնարավոր է եղել կազմակերպությանը դուրս գալու այն դժվարին շրջանից, վորն ապրում եր Հայաստանի պիոներիան մինչև 6-րդ համագումարը: Այս բոլոր փաստերը միանգամ ևս ճշտում և համոզուցուցիչ են դարձնում, վոր կոմյերիտմիությունը և կուսակցությունը վերջին շրջանում կատարել է խոշոր շրջադարձ պիոներ կազմակերպության կոմ. դաստիարակության ապահովման գործում (թերթ, ժուռնալ, կադրեր, կուսակցական կորիզ, կադրերի պատրաստում, լագեր, թատրոն, կինո և այլն):

Չնայած կազմակերպությունը 6-րդ համագումարից մինչև 7-րդ համագումարը ունեցել է խոշոր նվաճումներ քաղաքական—տնտեսական, կուլտուրական ֆրոնտներում, սակայն այդ բոլորը բավարար համարել չենք կարող, ելնելով մեր երկրի սոց. շինարարության վերելքի ներկա տեմպերից: Դեռ յեվս պիոներական բոլոր կոլլեկտիվները իրենց աշխատանքների հիմնական առանցքը չեն դարձրել արդյունաբերության կոլխոզ—սովխոզ շինարարության կոնկրետ խնդիրները, վորի հետեվանքով, եղ տնտեսական յեվ սոց. շինարարության աշխատանքները չեն դարձված պիոներ կազմակերպության աշխատանքների հիմնական առանցքը առանձին ողակներում այդ աշխատանքները կրում է պատահական կամպանիոն բնույթ:

Չնայած կուսակցության և կոմյերիտմիության

ճիշտ քաղաքական ղեկավարության, և նրա դիրեկտիվներին պետք է արձանագրել, որ դեռ ևս կոմյերիտ կազմակերպության մասնավորապես գյուղական առանձին ողակներ թերագնահատում են պատանեկական շարժման ղեկավարման խնդիրները, որի ասպարեզում ունենք բավականին լուրջ յեվ աչքի ընկնող բացեր, ինչպիսին է՝ ղեկավարների ընտրության, կադրերի պատրաստման գործում ունեցած անտարբեր վերաբերմունքը յեվ այլն: Այս բոլորը տեղի են տվել մի շարք շրջաններում պիոներ կազմակերպության անթույլատրելի թուլացման (Դարալագյազ, Դիլիջան, Ղամարլու), որտեղ նույնիսկ մի շարք կոլեկտիվների ցրման դեպքեր են տեղի ունեցել:

7-րդ համագումարն այդ յերևույթը գնահատում է որպես աջ օպորտյունիզմի պրակտիկա և պահանջում է կոմսոմոլի և պիոներ կազմակերպությունից ամենաանողոք պայքարը մղել այն տրամադրությունների դեմ, որոնք փորձեր են անում թերագնահատել պիոներական կազմակերպության խոշոր նշանակությունը սոցիալիստական շինարարության բնագավառում և ունեցած այն խոշոր նվաճումները, որը ձեռք է բերել պիոներ կազմակերպությունը վերջին տարիների ընթացքում կուսակցության և կոմսոմոլի անմիջական ղեկավարության շնորհիվ:

Չնայած պիոներ կազմակերպության աճման խոշոր նվաճումներին, կազմակերպության կրկնապատկմանը, այնուամենայնիվ պետք է արձանագրել, մասնավորապես վերջին շրջանում աճումն ընթացել և ընթանում է դանդաղ, որի համար 7-րդ համագումարը հարվածային խնդիր է դնում, ինչպես կոմսոմոլի,



նույնպես և պիոներ կազմակերպության անմիջական ղեկավար օրգանների առաջ ամենավճռական և հարվածային տեմպ վերցնել այդ բնագավառում, որն ապահովի ոչ միայն կրկնապատկելու, այլ և յեռապատկելու պիոներ կազմակերպությունն ի հաշիվ պրոլետարական, աշխատավորական յերեխաների: Համագումարը գտնում է որ պիոներ կոլեկտիվները 100 տոկոսով պետք է ընդգրկեն բանվորների, կոլխոզնիկների, բատրակ—չքավորների յերեխաներին, որի համար և պետք է ավելացնել արտադրական կոլեկտիվների քանակը և մեծ կոլխոզներին կից կազմակերպել պիոներ կոլեկտիվներ, վերակառուցելով նրանց վողջ աշխատանքները ըստ արտադրության և կոլխոզ շինարարության ներկա պահանջների ու տեմպերի:

Համագումարը գտնելով պիոներ կազմակերպության աշխատանքների կանոնավորման, աշխուժացման հիմնական միջոցը ԼԿՅԵՄ կազմակերպության ել ավելի քան ընդհուպ մոտեցումը պիոներ կազմակերպության աշխատանքներին, առաջադրում է բոլոր կազմակերպություններին ապահովել պիոներ կոլեկտիվները քաղաքականապես գրագետ, կայուն, պիոներ աշխատանքներին ունակ ընկերներով:

Լուրջ ուշադրություն դարձնել կոլվարական կադրերի, ինչպես նաև վարձու ակտիվի պատրաստման, վերապատրաստման գործին՝ կազմակերպել այդ նպատակով համապատասխան կարճատև դասընթացներ, սեմինարներ, հեռակա կուրսեր, հատուկ մեթոդական կաբինետներ յեվ այլն: Մյուս կողմից համագումարը գտնում է արդեն հասունացած խնդիր կոլվարական կադրերի սիստեմատիկ պատրաստման համար հատուկ

տեխնիկում և ինստիտուտ ունենալու անհրաժեշտությունը՝ առաջադրում է պիոներ կենտ. բյուրոյին և Լուսժողկոմատին հաշվի առնելու ինստիտուտի հետ կապված բոլոր տեսակի խնդիրները և 31-32 ուս. տարում դիմել գործնական քայլերի այդ ուղղությամբ։

Համագումարն ընդգծում է, որ կոմյերիտմիության պատանեկության դաստիարակության ասպարեզում քիչ տեղ է տվել նրան իդեոլոգիականապես զինելու գործին, որի համար առաջարկվում է ամենամաքսիմալ ուշադրություն դարձնել պիոներական կազմակերպության իդեոլոգիական աշխատանքների խորացման, ամրապնդման ապահովման խնդրին, յերբևիցե մոռացության չտալով այն հանգամանքը, որ դասակարգային թշնամին ամեն կերպ ձգտում և փորձեր անում իր ազդեցության տակ առնել պատանեկությանը։ Անհրաժեշտ է այսուհետև պիոներ կազմակերպության էլ ավելի քան հաղորդակից անել ընթացիկ քաղաքական կյանքին, դասակարգային պայքարի խնդիրներին, մերկացնելով դասակարգային թշնամուն իր ամբողջ էությամբ և մեքենայություններով։ Կուլակությունը որպես դասակարգ վերացնելու համատարած կոլեկտիվացման բազայի վրա, անկասկած ավելի է սրվելու դասակարգային պայքարը, որն իր խոշոր ազդեցությունն պետք է ունենա նաև պատանեկության վրա, այսպիսով հարվածային խնդիր է դրվում մի կողմից ավելի քան ապահովելու պրոլետարական ղեկավարությունը, պիոներական կազմակերպության և ընդհանրապես պատանեկության լայն մասսաների վրա, մյուս կողմից կուլակների, ձայնազուրկների յերեխաներին. հատուկ մոտեցում ունենալու և նրանց



պիոներ կազմակերպության ազդեցության տակ առնելու խնդիրը։

Պիոներական կազմակերպության առաջ խնդիր է դրվում քաղաքական պիոներական կազմակերպության մեջ ընդունել, ազդեցության տակ առնել կուլակների ձայնազուրկների բոլոր յերեխաներից այն մասին, վորոնք դպրոցում, հասարակական աշխատանքների ընթացքում ցույց են տվել իրենց վորպես խորհրդային իշխանության բարեկամների յեվ բացասական վերաբերմունք են հայտնաբերել հանդեպ իրենց ծնողների։

Պարտադիր ուսուցումը և պոլիտեխնիկական կրթությունը, վորը համարվում է վողջ լուսավորության սիստեմի վերակառուցման հիմնական խնդիրներից մեկը, պետք է արձանագրել, վոր իրենց արժանի տեղը դեռ չեն գրել պիոներ կազմակերպության աշխատանքներում և այդ ուղղությամբ պիոներ կազմակերպությունը շատ թույլ ու անբավարար մասնակցություն է ունեցել։ Սակայն այդ աշխատանքները համարելով պիոներ կազմակերպության աշխատանքների ամենակարևոր բնագավառներից մեկը, անհրաժեշտ է ծավալել պայքարը պոլիտեխնիկական կրթության, կուլտուրական վերելքի, պարտադիր ուսուցման համար, վորն ամենամեծ ազդակն է մեր յերկրում կուլտուրական հեղափոխության ֆրոնտում։ Այդ պայքարի նպատակը պետք է լինի ամբողջովին ընդգրկելու անգրագետ, կիսագրագետ պատանիների համապատասխան դպրոցներում, պայքարել յերկու տարի մնացողների դեմ, ապահովել բանվորի, չքավորի, բատրակների յերեխաներին հագուստով, գրենական պիտույքներով, տաք նախաճաշիկով յեվ այլն։ Համագումարը անբավարար է համա-

ռում մինչև այժմս տարած աշխատանքները յերեխաների և անչափահասների իրավատնտեսական շահերի պաշտպանության գործը, ինչպես գյուղերում, նույնպես էլ քաղաքներում։ Դեռ. ավելին հաճախ ամենակոպիտ ձևերով խախտվում են աշխատանքի օրենսգրքի կետերը յերեխաների աշխատանքների ընթացքում։ Այս բոլորը նկատվում է վոչ միայն կապիտալիստական տարրերի՝ կուլակների, կղերականության կողմից այլ և նույնիսկ արհեստավորների, կոլխոզների և մեր մի շարք հիմնարկ ձեռնարկների կողմից։

Դասակարգային պայքարի անհամբերթաց սրման ներկա պայմաններում, անչափահասների իրավատնտեսական շահերի պաշտպանության, նրանց կապիտալիստական տարրերի՝ կուլակության ազդեցությունից զերծ պահելուց և նրանց այդ տարրերի դեմ մղած պայքարին մասնակից անելու համար, պահանջվում է ամենալուրջ ուշադրություն դարձնել նրանց կոմունիստական դաստիարակության և մյուս կողմից պայքարը նման դեպքերի դեմ ուժեղացնելու վրա։ Համագումարը անհրաժեշտ է համարում մտցնել մի շարք փոփոխություններ գոյություն ունեցող աշխ. պաշտպանության օրենսգրքի մեջ (կապված կոլխոզ—սովխոզ շինարարության հետ) հարց հարուցել համապատասխան օրենսդրական մարմինների առաջ այդ աշխատանքների կատարումը վերջացնել ամենակարճ ժամանակամիջոցում։ Այդ փոփոխությունները պետք է լրիվին ապահովեն անչափահասների տնտեսաիրավական շահերը նոր պայմաններում։

Սրա հետ միասին պետք է ուժեղացնել պիոներական կոնտրոլը պատանիների յեվ անչափահասների աշ-



խատանքային պայմանագրի կնքման գործին, հաճախակի անցկացնել ուսումնասիրություն, կնքված պայմանագրերի յեվ իր ժամանակին ձեռք առնել կտրուկ միջոցներ յերբ նկատվեն պայմանագրի այս կամ այն կետի խախտումը։

Միաժամանակ ուշի ուշով պետք է հետևել, վորպեսզի այս կամ այն տարրերը առանց պայմանագիր կնքելու չվերցնեն իրենց մոտ աշխատանքի վորևե պատանի։

Պիոներ կազմակերպության վողջ կուլտ-մասսայական աշխատանքները պետք է ընթանան պատանիների հասարակական գործնեյության, վորակի բարձրացման ուղիով՝ հիմք ունենալով ապահովելու աշխատանքների քաղաքական բովանդակությունը։

7-րդ համագումարը արձանագրելով պիոներական կազմակերպության առողջապահական բնագավառում ունեցած խոշոր նվաճումը, ամառային լագերները, էքսկուրսիաների կազմակերպումը, պիոներական բժշկական կաբինետների կազմակերպումը և այլն միաժամանակ գտնում է վոր դեռևս անբավարար հիմքերի վրա են դրված պատանեկության լայն մասսաների առողջապահության գործի կազմակերպման խնդիրը։ Վորպեսզի ապահովվի պատանեկության լայն մասսաների առողջապահական գործի կազմակերպումը, համագումարն առաջարկում է պիոներ կենտ. բյուրոյին, ամենալայն աջակցություն Առժողկոմատի և տնտեսական օրգաններին՝ այս տարի ավելի լայն մասսայական ընույթ տալ պիոներական լագերների կազմակերպման, ընդգրկելով ամառային լագերներում ինչպես պիոներական կազմակերպության խոշոր մասին,

նույնպես և անկազմակերպ պատանեկության, միաժամանակ նախաձեռնել պատանեկության համար հատուկ սանատորիաներ և հանգստյան տներ կազմակերպելու գործը։

Հատուկ նշանակություն տալով աճող սերնդի սննդի ապահովման գործին, հարկ համարել համապատասխան տնտեսական օրգանների, կոոպերացիայի առաջ, ավելի կանոնավորելու պատանեկության սննդի ապահովման գործը, վորի համար կազմակերպել դըպրոցներին կից հատուկ բուֆետներ, ապահովելով դպրոցական պատանեկությանը մասնավորապես բատրակ, չըքավոր յեվ բանվոր յերեխաներին տաք նախաճաշիկով։

Պիոներական ֆիզկուլտ աշխատանքները կանոնավորելու համար, համագումարն առաջարկում է ֆիզկուլտ գեր. խորհրդին և պիոներ կենտ. բյուրոյին ապահովել պիոներ կազմակերպությանը համապատասխան մասնագետ ֆիզկուլտ կադրերով, կազմակերպել այդ նպատակով հատուկ կարճատև դասընթացներ, սեմինարներ միաժամանակ մշակել վերջնականապես պիոներ կազմակերպության ֆիզկուլտուրայի ձևերն ու մեթոդները և այդպիսին լույս ընծայել հատուկ բրոշյուրով։

Չնայած վերջին շրջանի հոկտեմբերիկների մեջ յեղած նվաճումներին, նրա շարքերի կրկնապատկման՝ համագումարը կոմյերիտ յեվ պիոներ կազմակերպության վողջ ուշադրությունն է հրավիրում այդ գործի էլ ավելի կարգավորման, կադրերի պատրաստման աշխատանքների բովանդակության աշխուժացման, նոր ձևեր ու մեթոդներ մշակելու խնդրին։

Համագումարը գտնում է միանգամայն, անհրա-



վոր պատանեկության գեղարվեստական գրականության հրատարակման գործը. առաջադրում է համապատասխան օրգաններին՝ պիոներ կենտ. բյուրոյին. Լուսժողկոմատին և Պետհրատին լուրջ ուշադրություն դարձնելու մանկական գեղարվեստական տեխնիկական գրականության պարբերական հրատարակության գործի կազմակերպմանը։

---

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0189179

ԳԻՆԸ 10 ԿՈՊ. (1 մ.)

160

Резолюция VII съезда ВЛКСМ
по отчетному докладу ЦК

Госисдат ССР Армени

Эривань